**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 1**
**№ ԳՀԱՊՁԲ-20-10/9-3 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ**

ք. Երևան 15.04.2020թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետ Ն. Յոլչյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև «Գնորդ», մի կողմից և «Նաիրի Թորոսյան» Ա/Ձ-ն, մյուս կողմից, այսուհետև՝ «Վաճառող», երկուսը միասին՝ Կողմեր, հիմք ընդունելով **26.12.2019թ.** կնքված **№ ԳՀԱՊՁԲ-20-10/9-3** գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.15 կետը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

## 1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը, հիմք ընդունելով համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու փաստը, փոխադարձ համաձայնությամբ որոշեցին կնքել սույն Համաձայնագիրը՝ սահմանելով Ապրանքների գնման և վճարման ժամանակացույցեր՝ համաձայն Հավելված № 1-ի և 2-ի:

1.2 Վաճառողը պարտավորվում է սույն Համաձայնագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին մատակարարել՝ Պայմանագրի տեխնիկական բնութագրերով նախատեսված ապրանքներ (այսուհետև՝ Ապրանք)՝ համաձայն № 1 Հավելվածով սահմանված գնման ժամանակացույցի, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար՝ վճարման ժամանակացույցով՝ հավելված N 2-ով, նախատեսված ժամանակահատվածում:

## 2. Գինը և վճարման կարգը

2.1 Սույն Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է 15,268,492 (տասնհինգ միլիոն երկու հարյուր վաթսունութ հազար չորս հարյուր իննսուներկու) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Համաձայնագրի կատարումն ապահովելու նպատակով կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ նաև հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

2.2 Գնորդն իրեն հանձնած Ապրանքի դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի **3.3** կետով նախատեսված կարգով, 15 բանկային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան **10.12.2020թ.**:

## 3. Այլ պայմաններ

3.1 Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ապրանքի մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4 Սույն Համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:

3.5 Սույն Համաձայնագիրը կազմված է 3 էջից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն համաձայնագրի N 1 և 2 Հավելվածները հանդիսանում են սույն Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.6 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում **ՀՀ ՊՆ ԿՇ և ԱԲ վարչությունը:**

## 4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ՀՀ պաշտպանության նախարարություն | Ա/Ձ Նաիրի Թորոսյան |
| ՀՀ, ք. Երևան, Բագրևանդի 5 | Ք. Երևան, Ներքին Շենգավիթ 2փող. 35 տուն |
| ՀՀ ՖՆ գործառնական վարչություն | «Արարատբանկ» ԲԲԸ |
| Հ/Հ 900011144079 | Հ/Հ 1510003068610100 |
| ՀՎՀՀ 02522157 | ՀՎՀՀ 35015341 |
| ՀՀ ՊՆ ՆՏԱ Դեպարտամենտի պետ | |
| Ն. ՅՈԼՉՅԱՆ | Ն. ԹՈՐՈՍՅԱՆ |

Հավելված N 1
N ԳՀԱՊՁԲ-20-10/9-3 պայմանագրին կից
N 1 Համաձայնագրի

## ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Հ/հ | Ապրանքի անվանում | Չ/Մ | Ընդհանուր քանակ | Մատակարարումը՝ 2020թ (ըստ համապատասխան եռամսյակների) | | Միավորի գինը /ՀՀ դրամ/ | Ընդհանուր գումար /ՀՀ դրամ/ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | 2-րդ եռամսյակ | 3-րդ եռամսյակ | | |
| 6. | ներկ-էմալ, գույնը՝ սպիտակ (Ներկ սպիտակ) | կգ | 9000 | 4500 | 4500 | 830 | 7,470,000 |
| 7. | ներկ-էմալ, գույնը՝ շականակագույն (Ներկ հատակի) | կգ | 5000 | 3750 | 1250 | 735 | 3,675,000 |
| 8. | ներկ-էմալ, գույնը՝ սև (Ներկ սև) | կգ | 1000 | 750 | 250 | 699 | 699,000 |
| 9. | յուղաներկ (Ներկ կապույտ) | կգ | 500 | 425 | 75 | 837 | 418,500 |
| 12. | յուղաներկ (Ներկ տարբեր գույների) | կգ | 1800 | 1800 | | 744.44 | 1,339,992 |
| 13. | յուղաներկ (Ներկ տարբեր գույների) | կգ | 2000 | 1500 | 500 | 833 | 1,666,000 |
| Ընդամենը | | | | | | | 15,268,492 |

**ԳՆՈՐԴ**

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ՆՏԱ Դեպարտամենտի պետ

Ն. ՅՈՆՋՅԱՆ

**ՎԱՃԱՌՈՂ**

Ա/Ձ Նաիրի Թորոսյան

Ն. Թորոսյան

Հավելված N 2
N ԳՀԱՊՁԲ-20-10/9-3 պայմանագրին կից
N 1 Համաձայնագրի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Հ/հ | Ապրանքի անվանում | CPV կոդ | Ընդհանուր գին/դրամ/ | Վճարումը նախատեսվում է իրականացնել 2020թ., համապատասխան ամիսների, այդ թվում՝ | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Ապրիլ | Մայիս | Հունիս | Հուլիս | Օգոստոս | Սեպտեմբեր | Հոկտեմբեր | Նոյեմբեր | Դեկտեմբեր, բայց ոչ ուշ, քան 10.12.2020թ. |
| 6. | ներկ-էմալ, գույնը՝ սպիտակ (Ներկ սպիտակ) | 44111445/503 | 7,470,000 | 3,735,000 | 3,735,000 | 3,735,000 | 7,470,000 | 7,470,000 | 7,470,000 | 7,470,000 | 7,470,000 | 7,470,000 |
| 7. | ներկ-էմալ, գույնը՝ շականակագույն (Ներկ հատակի) | 44111443/503 | 3,675,000 | 2,756,250 | 2,756,250 | 2,756,250 | 3,675,000 | 3,675,000 | 3,675,000 | 3,675,000 | 3,675,000 | 3,675,000 |
| 8. | ներկ-էմալ, գույնը՝ սև (Ներկ սև) | 44111440/503 | 699,000 | 524,250 | 524,250 | 524,250 | 699,000 | 699,000 | 699,000 | 699,000 | 699,000 | 699,000 |
| 9. | յուղաներկ (Ներկ կապույտ) | 44111413/509 | 418,500 | 355,725 | 355,725 | 355,725 | 418,500 | 418,500 | 418,500 | 418,500 | 418,500 | 418,500 |
| 12. | յուղաներկ (Ներկ տարբեր գույների) | 44111413/510 | 1,339,992 | 1,339,992 | 1,339,992 | 1,339,992 | 1,339,992 | 1,339,992 | 1,339,992 | 1,339,992 | 1,339,992 | 1,339,992 |
| 13. | յուղաներկ (Ներկ տարբեր գույների) | 44111413/511 | 1,666,000 | 1,249,500 | 1,249,500 | 1,249,500 | 1,666,000 | 1,666,000 | 1,666,000 | 1,666,000 | 1,666,000 | 1,666,000 |
| Ընդամենը | | | | | | | | | | | | 15,268,492 |

* Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:

**ԳՆՈՐԴ**

ՀՀ պաշտպանության նախարարության
ՀՀ ՊՆ ՆՏԱ Դեպարտամենտի պետ

Ն. ՅՈՒԼՉՅԱՆ

**ՎԱՃԱՌՈՂ**

Ա/Ձ Նաիրի Թորոսյան

Ն. Թորոսյան